ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր

ք. Երևան «26» օգոստոսի 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 78-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N 62-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասով և 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն և Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 499-Ն որոշումներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայության պաշտոնների գործառույթների իրականացման ապահովման համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի 2019 թվականի հուլիսի 22-ի N 62-Ա հրամանով հաստատված հավելվածի 2-րդ և 3-րդ կետերը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Լ. ՄԱՐԴՈՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ գիտության կոմիտեի
գլխավոր քարտուղարի
2019 թ. օգոստոսի 26-ի N 78-Ա հրամանի

Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների համար սահմանվող մասնագիտական գիտելիքների շրջանակը և աղբյուրները

1. Իրավական գիտելիքներ

1) Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գործունեության ոլորտը կարգավորող և հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների պաշտոնների առանձնահատկություններից բխող օրենքների իմացություն՝

ա) ՀՀ Սահմանադրություն.
բ) «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք.
գ) «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք.
դ) «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք.
ե) «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենք.
զ) «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» ՀՀ օրենք.
է) «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենք.
ը) «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենք:

2) Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գործունեության ոլորտը կարգավորող և հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների պաշտոնների առանձնահատկություններից բխող ենթաօրենսդրական ակտերի իմացություն՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման կարգը հաստատելու մասին» N 1510-Ն որոշում.
բ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Պետական եկամուտների և ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի մշակման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգին հավանության տալու մասին» N 42 արձանագրային որոշում.
գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» N 667-Լ որոշում.

«դ) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հունիսի 12-ի N 594-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 20-Լ հրաման»: **փոփ. 26.05.2020թ. N 26-Ա**

http://scs.am/files/kanonadrutyun_gitutyan_komite.pdf

ե) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2019 թվականի ապրիլի 23-ի «Գիտական կամ գիտատեխնիկական պետական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության գնահատման, տարակարգման և բազային ֆինանսավորման հիմնական սկզբունքները և չափանիշները հաստատելու մասին» N 390-Ա/2 հրաման.

http://scs.am/files/hraman-390A2-23.04.2019.PDF

զ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և գնահատման չափանիշները հաստատելու մասին» N 935-Ն որոշում.

http://scs.am/files/voroshum935.pdf

է) Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգը սահմանելու մասին» N 1121-Ն որոշում.

http://scs.am/files/voroshum-1121.pdf

ը) Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 27-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգըսահմանելու մասին» N 1122-Ն որոշում.

http://scs.am/files/voroshum-1122.pdf

թ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 27-ի «Գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորման կարգը սահմանելու մասին» N 1123-Ն որոշում.

http://scs.am/files/voroshum-1123.pdf

ժ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի «Գիտական կենտրոնների ձևավորման սկզբունքները, չափանիշները և կարգը հաստատելու մասին» N1555-Ն որոշում.

http://scs.am/files/voroshum1555_n_lracvats.pdf

ժա) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ձևավորման սկզբունքները և չափանիշները հաստատելու մասին» N 1558-Ն որոշում.

http://scs.am/files/voroshum1558_n.pdf

2. Այլ գիտելիքներ

1) Համակարգչից և այլ տեխնիկական միջոցներից օգտվելու համար անհրաժեշտ ծրագրերի իմացություն

ա) Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2012:

http://fliphtml5.com/fumf/egdx

բ) Ինֆորմատիկա 8-րդ դասարան: Հանրակրթական ավագ դպրոցի ընդհանուր և հումանիտար հոսքերի համար: Ս.Ս. Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ. Աղգաշյան: Երևան 2013:

http://online.fliphtml5.com/fumf/irey/#p=2

2) Գործնական գրագրության, փաստաթղթերի, գրավոր տեքստերի գրագետ շարադրման սկզբունքների և կանոնների իմացություն

ա) «Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակությունուն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012 թ., էջեր' 70- 129,

http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf

3) Ռուսերեն կամ անգլերեն կամ գերմաներեն կամ ֆրանսերեն լեզուների ազատ տիրապետում

ա) Ռուսաց լեզվի թեստային առաջադրանքների շտեմարան, Հեղ. խումբ՝ Լ. Գ. Բալասանյան, Թ. Կ. Բարսեղյան, Կ. Կ. Դավթյան և այլն.-Երևան, ՖԻԼԻՆ, 2014, մաս 3, 2016, մասեր 1-2

https://lib.armedu.am/resource/23925

բ) Անգլերենի 2018թ. միասնական քննության շտեմարան, Հեղ. խումբ՝ Լ. Աթոյան, Մ. Ապրեսյան, Ն. Ավագյան և այլն.–Երևան, ՌԱԲՈՒՆԻ ՍՊԸ, 2017, 2018, մասեր 1-3

https://lib.armedu.am/resource/23916

գ) Գերմաներենի 2016թ. պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան, Հեղ. խումբ՝ Յու. Գաբրիելյան, Ա. Ավետյան և այլն.-Երևան, ՌԱԲՈՒՆԻ ՍՊԸ, 2015, մասեր 1-3

https://lib.armedu.am/resource/23919

դ) Ֆրանսերենի 2016թ. պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան, Հեղ. խումբ՝ Ա. Երեմյան, Ա. Կարապետյան և այլն.-Երևան, ՌԱԲՈՒՆԻ ՍՊԸ, 2015, մասեր 1-2

https://lib.armedu.am/resource/23917